Դադարեցնել Ադրբեջանում եւ Հայաստանում ռազմական գործողությունները

Մոսկվա. 21 մայիս. Interfax

Ռուսաստանի Դերագույն խորհրդի մարդու իրավունքների եւ անվտանգության հանձնաժողովներն ընդունեցին միացյալ հայտարարություն, պահանջելով անհապաղ դադարեցնել Հայաստանում եւ Ադրբեջանում ռազմական գործողությունները եւ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերն ու բանակը միայն թշնամական կողմերի բաժանման նպատակով օգտագործել:

ԽՍՀՄ պրեզիդենտին, Դերագույն խորհրդին, Դերագույն դատարանի նախագահին եւ Գլխավոր դատախազին ուղղված դիմումի մեջ հանձնաժողովները պնդում են ազատ արձակել պատանդներին, անհապաղ դադարեցնել խաղաղ բնակչության բռնագաղթը:

Հանձնաժողովների կարծիքով շրջանում զինված ընդհարումներին առնչվող քրեական գործերը պետք է հանձնվեն ԽՍՀՄ դատախազությանը. *«քանի որ դիմակայության սրությունը բացառում է հետաքննության անաչառությունը հանրապետական մարմիններում»*:

Դիմումի մեջ ԽՍՀՄ Դերագույն խորհրդին առաջարկվում է ստեղծել պատգամավորական հանձնաժողով՝ *«վերանայելու հատուկ դրության ռեժիմի պահպանումը, խորհրդային բանակի եւ ՆԳՆ-ի ստորաբաժանումների գործողությունների օրինականությունը, Հայաստանում եւ Ադրբեջանում քաղաքացիների հիմնական իրավունքների պահպանումը»*: Հանձնաժողովի կազմի մեջ ենթադրվում է մտցնել այն հանրապետությունների Դերագույն խորհուրդների ներկայացուցիչներին, որոնք պատրաստ են միջնորդ հանդիսանալ: □